

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բակուր (Բորիս) Ավանեսի Կարապետյանը

ծնվել է 1941 թ. հունիսի 9-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մարգուշավան (Լենինավան) գյուղում:

Հայրը՝ մեծշենացի Ավանես Ղուկասի Կարապետյանը 1941 թ. հունիսի 22-ին մեկնել է պատերազմ, զոհվել է 1943 թ. հունվարի 1-ին Հյուսիսային Օսեթիայում: Մայրը մահացել է 1982-ին:

Մարաղայի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Եր-անի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1967 թ. այն ավարտել, ստանալով ինժեներ-տեխնոլոգի մասնագիտություն:

Պատմվածքներ գրել սկսել է ուսանողական տարիներից:

1962 թվականից զբաղվում է սա- գեղանկարչությամբ:

1966 թ. աշխատանքի է ընդունվել Եր-անի ամրանների գործարանում որպես առաջատար կոնստրուկտոր, 1971 թ. գործուղվել Գերմանական Դեմոկրատական Հարապետություն, մասնակցել Տիրբախի - Բոկսբերգի ջերմաէլեկտրակայանների կառավարման ավտոմատ համակարգի ստեղծմանն ու շահագործմանը:

1967 թ. սկսած հանրապետական մամուլում լույս էին տեսնում Բակուրի հոդվածները, հրապարակախոսական նյութերն ու պատմվածքները, հաղորդվում հեռուստատեսային ակնարկները՝ նվիրված հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրներին, հայ ժողովրդի արցախյան հատվածի կյանքին, նրա միջնադարյան հուշարձաններին:

1974 թ. աշխատանքի է ընդունվել հայկական հեռուստատեսությունում, աշխատել որպես խմբագիր, սեփական թղթակից, ապա՝ մեկնաբան: 1983-88 թթ. վարել է «Հսկում է օբյեկտիվը» հեռուստահանդեսը, պայքարել սոցիալական անարդարությունների, մաֆիայի դեմ:

1981 թ. մեծ վիպասան Րաֆֆու նոթերի ու նամակների հետքերով ճանապարհորդել է Արցախում, Սյունիքում, Նախիջ-անում, Ար-իքում, ապա - Իրանում, գրել «Հարյուր տարվա երկխոսություն» գրքերը, որի համար արժանացել Միքայել Նալբանյանի անվան Հայաստանի գրողների միության ամենամյա մրցանակին:

1982 թ. Նոյեմբերին Հայաստանի Ժուռնալիստների տանը կազմակերպվել է Բակուրի գրաֆիկ եվ գեղանկարչական աշխատանքների անհատական ցուցահանդեսը:

1988 թ. սկսած նկարահանումներ է կատարել Արցախյան զոյամարտի թեժ կետերում, վարել «Արցախյան օրագիր» հաղորդաշարը: Արցախում, Սումգայիթում, Գանձակ-Կիրովաբադում - այլուր կատարած նկարահանումների հիման վրա ստեղծել է բազմաթիվ վավերագրական ֆիլմեր, որոնք ցուցադրվել են շատ երկրներում:

1992-93 թթ. աշխատել է «Ազատամարտ» թերթում որպես Արցախյան բաժնի վարիչ, հրապարակել ռազմաճակատային հարյուրավոր ռեպորտաժներ, այլ տեղեկատվական ու վերլուծական նյութեր:

2000-2009 թթ. աշխատել է Եր-անի Մենջջմենթի - Եր-անի պետական համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետներում որպես դասախոս, դասավանդել լրագրության վարպետություն, հակամարտությունները - ժուռնալիստիկան, կինովավերագրություն, ֆոտովավերագրություն, օնլայն ժուռնալիստիկա առարկաները:

2002թ. «Մոսկվա» կինոթատրոնում մասնակցել է ՀՀ եւ ԼՂՀ գեղանկարիչների ցուցահանդեսին:

2002թ. նոյեմբերի 5-ին բացվել է Բակուրի լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

2005թ. մասնակցել է Նկարիչների տանը գրող-գեղանկարիչների ցուցահանդեսին:

2006, «111 ակնթարթ Շուշի բերդաքաղաքի կյանքից» լուսանկարների ցուցահանդեսներ Մոսկվայում, Երեւանում, Ստեփանակերտում:

2007, «Արեւմտյան Հայաստանը մինչեւ 1915 թ. լուսանկարներում» ցուցահանդես Երեւանում:

1985 թվականից լույս են տեսել Բակուր Կարապետյանի հետ-յալ գրքերը.

1. «Վերագտնված օրեր», վիպակ - 1985, Եր-ան
2. «Հարյուր տարվա երկխոսություն», ուսումնասիրություն - 1986, Թեհրան
3. «Հարյուր տարվա երկխոսություն», 2-րդ հրատ., 1989, Եր-ան
4. «Աղետ», վավերագիր -1990, Եր-ան

5. «...Եվ նրա շուրջը», վավերագիր -1990, Եր-ան,
6. «Ճերմակ անդունդ», պատմվածքներ, նովելներ, վիպակներ - 1990, Եր-ան
7. «Անգլուհու արցախեան ողիսականը», Էսսե - 1994, Թեհրան
8. «Պարսկաստանյան հանդիպումներ», ուսումնասիրություն - 1996, Եր-ան
9. "ԹպռՊՈՐ ԸսՌպԶ: "ԽՑՑ շ?", ԺՐպԶՈՎ («Յեյդար Ալին՝ «Ո՞վ եմ ես...» (ռուսերեն)- 1998, Եր-ան)
10. ՔՁՈռվօ ԹՈՎՊՁՈՍ - ԽՌՐՏԶՈՈՈՊՈ Ռ- հպԶպՐՎՏՀՏ ԸՐՓՈւՈՄՆ, ՌրՑՏՐՌՐ՝ - 1998, ԾՏրՍԶՈ («Գանձակ-Կիրովաբադի - Յյուսիսային Արցախի գաղտնիքները» (ռուսերեն) - 1998, Մոսկվա)
11. «Շուշի բերդաքաղաքը» (ինագույն ժամանակներից մինչև 1920 թ.) - 2000, Եր-ան
12. «Երկխոսություն Քարվաճառի ճանապարհին», հրապարակախոսություն - 2003, Եր-ան
13. «Ճողոպրիկի - փոքրիկ Յովիկի արկածները», գիտաֆանտաստիկ վիպակ - 2003, Եր-ան
14. «Յեռուստագիշատիչը», վեպ - 2004, Եր-ան:
15. «Գյուլիստան նամե», պատմություն (մ.թ.ա. 750 թ. մինչև 1828 թ.), հ.1 - 2006, Երեւան
16. Քծպոպրվօռ ԿՐպԶպՍՍՆ, ՊԶպ տՏԶպրՑՌ - 2006, ԾՏրՍԶՈ
17. «Նգովյալները», պատմվածքներ, նովելներ, - 2008, Երեւան
18. «Արցախյան գոյամարտի համահավաք», մատենաշար, հ. 1-ին,- 2008, Երեւան